# «Յե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդ

2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններ

**Բովանդակություն**

**Էջ**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ....................................................................1

Զուտ ակտիվների մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ........................4

2021 թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարվա ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն ........................................................................................................5

2020 թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարվա զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն......................................................................6

Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն

1. Ֆոնդը ........................................................................................................................7
2. Ֆոնդի տվյալները՝ վերջին երկու տարիների համար ..................................................... 11
3. Ֆոնդի ակտիվների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն .................. 11
4. Զուտ ակտիվների արժեքի կազմը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և զուտ ակտիվների արժեքի կազմը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ............................... 12

Deloitte.

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ.`   +374 10 52 65 20
Ֆաքս`  +374 10 52 75 20
www.deloitte.am

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ցե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդի մասնակիցներին`

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ցե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդի (այսուհետ` Ֆոնդ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են զուտ ակտիվների մասին հաշվետվությունը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆոնդի արդյունքների մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ֆոնդի զուտ ակտիվների մասին հաշվետվությունը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ,  նույն ամսաթվին ավարտված տարվա Ֆոնդի արդյունքների և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունները` Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության` «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից` համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և մենք կատարել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները` համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան` մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար` անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ֆոնդը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ»  բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ:  «ԴելոյթԹուշԹոմացուԼիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2021 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ֆոնդին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի գործընկեր

Գործադիր տնօրեն՝ Ս. Հակոբյան՝ ի դեմս
լիազորված անձ Ա. Ղևոնդյանի (գործող
2022թ. փետրվարի 24-ին տրված
N 24022022 լիազորագրի հիման վրա)

2022 թ. ապրիլի 29
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

# «Ցե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդ

**Զուտ ակտիվների մասին հաշվետվություն**
**2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| ՀՀ դրամով | 2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31 | | 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31 | |
|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Պարտատոմսեր | 4,411,456,517.95 | | 2,495,020,381.58 | |
| Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ | 3,036,115,704.39 | | 1,540,032,588.36 | |
| Դրամական միջոցներ | 34,454,055.65 | | 3,299,253.24 | |
| Ավանդներ | 2,551,000,000.00 | | 1,043,700,000.00 | |
| Հաշվեգրված տոկոս | 50,998,377.98 | 10,084,024,655.97 | 101,185,833.44 | 5,183,238,056.62 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **10,084,024,655.97** | | **5,183,238,056.62** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| Հաշվեգրումներ վճարների գծով | (15,012,344.72) | (15,012,344.72) | (6,670,123.43) | (6,670,123.43) |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **(15,012,344.72)** | | **(6,670,123.43)** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ** | | **10,069,012,311.25** | | **5,176,567,933.19** |

**Հաստատվել է հրապարակման համար 2022 թվականի ապրիլի 29 -ին:**

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

**Արման Վարդանյան**
Գլխավոր գործադիր տնօրեն

**Իզաբելա Ադիլխանյան**
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

## «Յե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդ

### 2021 թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարվա ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն

| ՀՀ դրամով | 2021 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ՏԱՐԻ | | 2020 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ՏԱՐԻ | |
|---|---|---|---|---|
| **Ա) ՖՈՆԴԻ ԻՐԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ** | | | | |
| **Ֆոնդի սովորական արդյունք Եկամուտ (առանց փակման գնի)** | | | | |
| Տոկոսային եկամուտ | 500,760,113.03 | 500,760,113.03 | 250,409,226.53 | 250,409,226.53 |
| **Ծախսեր** | | | | |
| Կառավարման վճար | (83,318,709.85) | | (39,423,325.52) | |
| Աուդիտի վճար | (5,000,000.00) | | (5,000,000.00) | |
| Շահութահարկի վճար | (1,107,847.32) | (89,426,557.17) | (521,573.52) | (44,944,899.04) |
| **Սովորական ֆոնդի արդյունք** | | **411,333,555.86** | | **205,464,327.49** |
| **Իրացված փակման գին** | | | | |
| Իրացված օգուտ/(վնաս) | 50,122,778.26 | | 37,140,586.76 | |
| Գործարքի միջնորդավճարներ | (116,334.70) | | (261,473.40) | |
| Արտարժութային տատանումների ազդեցություն բանկային հաշիվների վրա | (14,340,293.04) | 35,666,150.52 | (5,149,641.97) | 31,729,471.39 |
| **Իրացված փակման գին** | | **35,666,150.52** | | **31,729,471.39** |
| **Ֆոնդի իրացված արդյունք** | | **446,999,706.38** | | **237,193,798.88** |
| **Բ) ՉԻՐԱՑՎԱԾ ՓԱԿՄԱՆ ԳԻՆ** | | | | |
| **Չիրացված փակման գնի փոփոխություն** | (274,691,345.32) | **(274,691,345.32)** | 196,210,463.89 | **196,210,463.89** |
| **Գ) ԵԿԱՄՏԻ ՃՇԳՐՏՈՒՄ** | | | | |
| Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա ընթացքում եկամտի գծով | 0.00 | | 0.00 | |
| Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա ընթացքում նախկինում եկամտի գծով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| | | **0.00** | | **0.00** |
| **ՖՈՆԴԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | | **172,308,361.06** | | **433,404,262.77** |

# «Յե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդ

## 2021 թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարվա զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

| ՀՀ դրամով | | |
|---|---|---|
| **A դասի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (1,356,952 փայ՝ մեկ փայի դիմաց 1,029.5806 ՀՀ դրամ արժեքով)** | | 1,397,091,394.44 |
| **B դասի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (1,443 փայ՝ մեկ փայի դիմաց 1,028.4873 ՀՀ դրամ արժեքով)** | | 1,483,800.62 |
| **Ֆոնդի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | **1,398,575,195.06** |
| **Բաշխում (0,00 ՀՀ դրամ x 0,00 փայ)** | | **0.00** |
| **Փայերի փոփոխություն** | | |
| Դաս A ՝ բաժանորդագրում (3,041,477 փայ) | 3,275,250,000.00 | |
| Դաս B ՝ բաժանորդագրում (67,679 փայ) | 69,338,500.00 | |
| Դաս A ՝ մարում(0 փայ) | (0.00) | |
| Դաս B՝ մարում (0 փայ) | (0.00) | |
| Համամասնորեն եկամտի ճշգրտում | 0.00 | **3,344,588,500.00** |
| **Տարվա Ֆոնդի արդյունք** | | **433,404,262.77** |
| **A դասի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (4,398,429 փայ՝ մեկ փայի դիմաց 1,158.7577 ՀՀ դրամ արժեքով)** | | **5,096,713,505.41** |
| **B դասի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (69,122 փայ՝ մեկ փայի դիմաց 1,155.2612 ՀՀ դրամ արժեքով)** | | **79,854,427.78** |
| **Ֆոնդի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | **5,176,567,933.19** |
| **Բաշխում (0,00 ՀՀ դրամ x 0,00 փայ)** | | |
| **Փայերի փոփոխություն** | | |
| Դաս A ՝ բաժանորդագրում (3,531,488 փայ) | 4,113,000,000.00 | |
| Դաս B ՝ բաժանորդագրում (522,933 փայ) | 607,424,600.00 | |
| Դաս A ՝ մարում(0 փայ) | (0.00) | |
| Դաս B՝ մարում (258 փայ) | (288,583.00) | |
| Համամասնորեն եկամտի ճշգրտում | 0.00 | **4,720,136,017.00** |
| **Տարվա Ֆոնդի արդյունք** | | **172,308,361.06** |
| **A դասի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (7,929,917 փայ՝ մեկ փայի դիմաց 1,181.9747 ՀՀ դրամ արժեքով)** | | **9,372,961,931.16** |
| **B դասի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (591,797 փայ՝ մեկ փայի դիմաց 1,176.1640 ՀՀ դրամ արժեքով)** | | **696,050,380.09** |
| **Ֆոնդի ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | **10,069,012,311.25** |

## 1. ՖՈՆԴԸ

«Ցե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդը («Ֆոնդը») հիմնադրվել է 2019 թ. օգոստոսի 30-ին և սկսել է գործունեությունը 2019 թ. հոկտեմբերի 8-ից: Ֆոնդի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37: Ֆոնդի կառավարիչն է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որն ավստրիական «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերության (C-QUADRAT Investment AG) (Վիենա, Ավստրիա) (74,9%) և գերմանական «Ամպեգա ասեթ մենեջմենթ» (Ampega Asset Management GmbH) (Քյոլն, Գերմանիա) (25,1%)՝ «Տալանքս ԱԳ գրուփի» (Talanx AG Group) անդամ ընկերության համատեղ ձեռնարկությունն է: «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերությունը (C-QUADRAT Investment AG) ակտիվների կառավարիչ է, որը մասնագիտացած է բացարձակ և ընդհանուր եկամտաբերության քանակական և հայեցողական ռազմավարություններում: Ընկերությունը հիմնադրվել է 1991 թվականին և 2006 թվականից այն ցուցակվում է Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսայի առաջնային հարթակում, իսկ 2008 թվականի մայիսից՝ նաև Վիենայի ֆոնդային բորսայում: «Ամպեգա ասեթ մենեջմենթ» (Ampega Asset Management) ընկերությունը՝ «Ամպեգա ինվեսթմենթ» (Ampega Investment) և «Տալանքս Իմմոբիլեն Մենեջմենթ» (Talanx Immobilien Management) ընկերությունների հետ համատեղ իրենցից ներկայացնում են Գերմանիայի մեծությամբ երրորդ ապահովագրական խմբի՝ «Տալանքս» (Talanx AG)-ի ֆինանսական ծառայությունների գծով սեգմենտը:

«Ցե-Քյու Արմենիա Գրուպ» ֆոնդը հրապարակային, բաց, ստանդարտ, պայմանագրային ներդրումային ֆոնդ է: Այն ունի դիվերսիֆիկացված ներդրումային պորտֆել: Ֆոնդի ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքն է՝ ապահովել Ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճ՝ Ֆոնդի ակտիվների մինչև 25%-ը ներդնելով բաժնետոմսերում, բաժնային արժեթղթերի ֆոնդերում և նմանատիպ այլ գործիքներում: Ակտիվների մնացած մասը ներդրվում է պարտքային գործիքներում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այնպիսի ներդրումային ֆոնդերում, որոնց ակտիվները ներդրվում են նմանատիպ արժեթղթերում և ավանդներում:

Ֆոնդի ակտիվները հանդիսանում են Ֆոնդի մասնակիցների, այլ ոչ թե Ֆոնդի կառավարչի սեփականությունը: Ֆոնդն ունի Ֆոնդի ակտիվների կառավարման կանոններ և սահմանափակումներ: Ֆոնդի ակտիվները ներդրվում են Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում՝ արտարժութային ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը:

Ֆոնդը թողարկում է երկու դասի փայ՝

1) A դաս՝ նախատեսված է ԿԲ կողմից լիցենզավորված կառավարիչ ունեցող ներդրումային ֆոնդերի, ինչպես նաև՝ օտարերկրյա կարգավորող մարմնի կողմից գրանցված և լիցենզավորված կառավարիչ ունեցող օտարերկրյա ներդրումային ֆոնդերի համար,
2) B դաս՝ նախատեսված է ֆիզիկական և իրավաբանական անձ ներդրողների համար:

Ֆոնդում նվազագույն սկզբնական ներդրման չափը կազմում է 250 մլն ՀՀ դրամ՝ A դասի փայ ձեռք բերողների համար, 3 մլն ՀՀ դրամ և 100 000 ՀՀ դրամ B դասի փայ ձեռք բերող իրավաբանական և ֆիզիկական անձ ներդրողների համար համապատասխանաբար:

Ֆոնդի փայերը որևէ կարգավորվող շուկայում ցուցակված չեն:

Փայերը դրանց տիրապետողներին ֆոնդի կառավարման վերաբերյալ որոշումների կայացման իրավունք չեն տալիս: Մասնակիցները քվեարկության իրավունք չունեն:

Ֆոնդը կարող է դադարեցվել Կառավարչի կամ Պահառուի կողմից՝ համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի և միմիայն ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») խորհրդի նախնական համաձայնության առկայության դեպքում:

**Ընդհանուր տեղեկություններ**

| | |
|---|---|
| *Ֆոնդի կառավարիչ* | «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն<br><br>Գրանցման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37<br>ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման ամսաթիվ՝ 29 նոյեմբերի 2013 թ.<br>Կառավարվող այլ ֆոնդեր՝<br>«Յե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ»<br>«Յե-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ»<br>«Յե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ»<br><br>Բաժնետիրական կառուցվածք՝<br>74,9 % «Յե-Կվադրատ» ներդրումային ընկերություն, 25,1% «Ամպեգա ասեթ մենեջմենթ»<br>Ընկերության ղեկավարությունը՝<br>Արման Վարդանյան (Գլխավոր գործադիր տնօրեն)<br>Իզաբելա Ադիլխանյան (Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն)<br>Ամբողջությամբ վճարված կապիտալ՝ 650,000 հազար ՀՀ դրամ |
| *Դիտորդ խորհուրդ* | Էռնստ-Լյուդվիգ Դրայս (Խորհրդի նախագահ)<br>Անդրեաս Վիմմեր<br>Յոհաննես Կերխեր<br>Կառլոս Մենդեզ դե Վիգո |
| *Ֆոնդի ակտիվների պահառու* | «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն (նաև՝ մասնակիցների փայերի պահառու և ռեեստրավար), գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, 5-րդ հարկ, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն |
| *Ֆոնդի բանկ* | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, գրանցման և գլխամասային գրասենյակի հասցեն՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Տերյան 66 |
| *Ֆոնդի ԶԱԱ հաշվարկն իրականացնող* | «Ռայֆազն Բանկ Ինթերնեյշնլ ԱԳ», հասցե՝ Ավստրիա, ք. Վիեննա, Ամ Ստադթպարկ 9 |
| *Աուդիտոր* | «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ |

Պորտֆելի հաշվառման և փայի հաշվարկային արժեքի արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ)։ Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային արտահայտությամբ ներկայացված դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների նկատմամբ հաշվարկված տոկոսային դրույք հաշվետու ամսաթվի դրությամբ (%)։

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան։ Հաշվետվություններում ներկայացված հաշվետու ժամանակաշրջանը 2021 թ. հունվարի 1-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարին է։

**Փայերի թողարկում և մարում**. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է ՀՀ դրամով և իրենից ներկայացնում է ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքի և ֆոնդի ընդհանուր պարտավորությունների տարբերությունը։ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, ինչպես նաև փայի հաշվարկային արժեքը և մարման ու թողարկման գները հաշվարկվում են յուրաքանչյուր աշխատանքային օր և հրապարակվում Կառավարչի պաշտոնական կայքէջում։ Փայերը թողարկվում և մարվում են թողարկման/մարման հայտ ներկայացվելու (սակայն ոչ շուտ, քան փայի դիմաց վճարումն ստանալը) օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 15:00-ի դրությամբ Ռեեստրավարի Ծրագրային համակարգում առկա փայի տեղաբաշխման/մարման գնով։ *Փայերի թողարկման համար վճար կամ միջնորդավճար չի գանձվում*։ Մարման վճարները սահմանվում են Ֆոնդի կանոններով և ՀՀ կիրառելի օրենսդրությամբ և կազմում են 0-3%՝ կախված տվյալ ներդրման՝ Ֆոնդում պահելու ժամկետայնությունից։ Թողարկման և Մարման վճարները,

ինչպես նաև՝ թողարկման և մարման հետ կապված մյուս բոլոր ծախսերը, իրականացվում են Մասնակցի հաշվին: Մարման վճարը փոխնացվում է Ֆոնդին:

**Ակտիվների պահառության, ռեեստրավարման և Ֆոնդի բանկի վճարներ.** Ֆոնդի բանկի կողմից միջնորդավճարներ չեն գանձվում: Պահառուի և Ռեեստրավարի պարգևավճարների դրույքաչափը սահմանվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ տարեկան 0.15%-ի չափով հաշվարկված օրական կտրվածքով: Պահառուի և Ռեեստրավարի վճարները ստանձնում է Ֆոնդի կառավարիչը:

**Ֆոնդի կանոնները.** Ֆոնդի կանոնները, պարբերական հաշվետվությունները, փայերի թողարկման և մարման վերաբերյալ տեղեկությունները, Ֆոնդի ներդրումային նպատակները և ներդրումային քաղաքականությունը, ինչպես նաև այլ տեղեկություններ զետեղված են և հասանելի Ֆոնդի կառավարչի պաշտոնական կայքէջում՝ https://www.c-quadrat-ampega.am:

**Ֆինանսական գործիքների գնահատման կանոնները.** արժեթղթերը զուտ ակտիվների մասին հաշվետվությունում ներկայացվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ներկա արժեքով, որն իրենից ներկայացնում է վերջին հասանելի շուկայական արժեքը, կամ շուկայի բացակայության դեպքում՝ արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Արժեթղթերի ներկա արժեքի՝ որոշված վերը նշված եղանակով, և նրանց սկզբնական միջին կշռված արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է հաշվետվություններում որպես չիրացված փակման գնի փոփոխություն: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առքուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են համաձայն վերը նշված եղանակի և այնուհետև փոխարկվում են պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող ՀՀ ԿԲ փոխարժեքով:

**Ավանդներ**. ավանդները գնահատվում են գծային մեթոդով:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են շուկայի փակման դրությամբ վերջին հասանելի առկա գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների կողմից ծանուցված փակման գներով: ՀՀ պետական պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր օր հրապարակվող շուկայական դրույքաչափերը:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները, հաշվի առնելով վերջին էական գործարքներում օգտագործված գները:

ՀՀ պետական պարտատոմսերը գնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ամենօրյա կտրվածքով հրապարակվող եկամտաբերության կորի հիման վրա:

**Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS).** UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների վերջին գնանշված արժեքով:

**Հարկում.** ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ֆոնդն իր ակտիվների հաշվին վճարում է շահութահարկ՝ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.01%-ի չափով հաշվարկվող օրեկան կտրվածքով:

**Կառավարման վճարներ.** կառավարման վճարները հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա և ճանաչվում են Ֆոնդի իրացված արդյունքում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ՝ աուդիտի վճարը, շահութահարկը և Ֆոնդի գործարքների հետ ուղղակիորեն կապված ծախսերը: Կառավարման տարեկան վճարը հաշվարկվում է օրական 1.1%-ի չափով A դասի համար, և 1.3%-ի չափով B դասի համար, ներառյալ՝ բոլոր կիրառելի հարկերը, և ենթակա է վճարման մինչև հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

**Բաշխումներ մասնակիցներին.** Ֆոնդի եկամուտը չի բաշխվելու մասնակիցներին, այլ վերստին ներդրվելու է Ֆոնդում: Մասնակիցները կարող են ստանալ Ֆոնդի եկամտի իրենց մասնաբաժինը միմիայն փայերի մարման միջոցով:

**Կառավարչի կողմից վճարվող վարձատրության քաղաքականությունը.** 2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա ընթացքում Կառավարչի կողմից իր աշխատակիցներին վճարված աշխատավարձերի ընդհանուր գումարը կազմում է 238,558 հազար ՀՀ դրամ (2020 թ.՝ 221,990 հազար ՀՀ դրամ), որից 177,103 հազար ՀՀ դրամը (2020 թ.՝ 188,878 հազար ՀՀ դրամը) ներկայացնում է ղեկավարության վարձատրությունը: Ֆոնդը աշխատակիցներ չունի: Ֆոնդի կողմից որևէ ուղղակի վճարում աշխատավարձերի գծով չի կատարվում: Կառավարչի կողմից հաշվարկվող վարձատրությունը հիմնված է աշխատավարձերի՝ հաստատագրված դրույքաչափերով քաղաքականության վրա և ուղղակիորեն կախված չէ Ֆոնդի արդյունքներից: Հաշվետու տարում Կառավարչի՝ վարձատրությանն առնչվող քաղաքականության էական փոփոխություններ չեն արձանագրվել:

**COVID-19.** 2020թ. սկզբին նոր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար շատ երկրների, այդ թվում նաև Հայաստանի, կողմից ձեռնարկված պատասխան միջոցառումները վնասել են տնտեսությանը և էական ազդեցություն են ունեցել համաշխարհային ֆինանսական շուկաների վրա: Ֆոնդի կառավարիչը հարմարվել է ընթացիկ պայմաններին, ներառյալ հեռավար աշխատանքի ներդրումը, ռիսկերի կառավարումը, ընթացիկ մարտահրավերներին արձագանքելը և արձագանքման այլ միջոցների կիրառումը, անհրաժեշտության դեպքում: Այնուամենայնիվ, քանի որ համաճարակը շարունակվում է նաև 2022 թվականին, իսկ անորոշությունը դեռևս պահպանվում է, այդ գործոնները կարող են բացասաբար անդրադառնալ Ֆոնդի արդյունքների և գործունեության վրա:

**Քաղաքական անկայունությունը և ռազմական գործողությունները տարածաշրջանում**

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտությունը սրվեց հրադադարի ռեժիմի խախտմամբ, որը վերականգնվեց 2020թ. նոյեմբերի 9-ին կողմերի միջև ստորագրված հայտարարությամբ: Այդ ժամանակից ի վեր Հայաստանը քաղաքական և տնտեսական ցնցումներ է ապրում: Հայտարարության արդյունքների դեմ մի շարք բողոքներ հանգեցրել են արտահերթ խորհրդարանական ընտրությունների, որոնք տեղի են ունեցել 2021թ. հունիսին:

Ինչպես նաև, Ուկրաինայում 2022թ. փետրվարի 24-ին սկսված հատուկ ռազմական գործողությանն ի պատասխան ԱՄՆ, ՄԲ, ԵՄ և այլ երկրների կողմից պատժամիջոցներ են սահմանվել Ռուսաաստանի որոշ պետական գործիչների, գործարարների և ընկերությունների նկատմամբ: Այսպիսի իրադարձությունների արդյունքում կարող է սահմանափակվել ռուսական բիզնեսի մուտքը միջազգային կապիտալի և արտահանման շուկա, կարող է արժեզրկվել ռուսական ռուբլին, նվազեցնել կապիտալի շուկաները և հանգեցնել այլ բացասական տնտեսական հետևանքների:

Իրավիճակի հետագա զարգացումը տարածաշրջանում կարող է էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա գործունեության արդյունքների վրա, ինչը դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով քաղաքական անկայունության հետ կապված անորոշության աստիճանը:

**Գործառնական ռիսկ.** գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառույթները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Խմբի հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգային հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Խումբը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիտորինգի և դրանց հակազդման միջոցով:

Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի

կրթության և գնահատման գործընթացներ:

## 2. ՖՈՆԴԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ՝ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹՎԻՑ

| Ամսաթիվը | Արժույթը | Ակտիվների զուտ արժեքը ԸՆԴԱՄԵՆԸ | Ակտիվների զուտ արժեքը ՄԵԿ ՓԱՅԻ ԴԻՄԱՑ | Բաշխումը ԸՆԴԱՄԵՆԸ | Բաշխումը ԸՍՏ ՓԱՅԻ |
|---|---|---|---|---|---|
| 2021 թ. դեկտեմբերի 31 | ՀՀ ԴՐԱՄ | 10,069,012,311.25 | A դաս` 1,181.9747<br>B դաս` 1,176.1640 | 0 | 0 |
| 2020 թ. դեկտեմբերի 31 | ՀՀ ԴՐԱՄ | 5,176,567,933.19 | A դաս՝ 1,158.7577<br>B դաս՝ 1,155.2612 | 0 | 0 |
| 2019 թ. դեկտեմբերի 31 | ՀՀ ԴՐԱՄ | 1,398,575,195.06 | A դաս՝ 1,029.5808<br>B դաս` 1,028.4873 | 0 | 0 |

## 3. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ, ՀՀ դրամով՝ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | A դաս՝ 1,029.5806<br>B դաս՝ 1,028.4873 |
| Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով՝ 2019 թ. հունվարի 1-ից 2019 թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարվա համար, ՀՀ դրամով | A դաս՝ 29.5806<br>B դաս՝ 28.4873 |
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ, ՀՀ դրամով՝ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | A դաս՝ 1,158.7577<br>B դաս՝ 1,155.2612 |
| Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով՝ 2020 թ. հունվարի 1-ից 2020 թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարվա համար, ՀՀ դրամով | A դաս՝ 129.1771<br>B դաս՝ 126.7739 |
| **Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %** | **A դաս՝ 12.55%**<br>**B դաս՝ 12.33%** |
| Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ, ՀՀ դրամով՝ 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | A դաս՝ 1,181.9747<br>B դաս՝ 1,176.1640 |
| Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով՝ 2021 թ. հունվարի 1-ից 2021 թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարվա համար, ՀՀ դրամով | A դաս՝ 23.2170<br>B դաս՝ 20.9028 |
| **Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %** | **A դաս՝ 2.00%**<br>**B դաս՝ 1.81%** |
| **Մեկ փայի դիմաց զուտ եկամուտը ՝ ՀՀ դրամով, սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից** | **A դաս՝ 181.9747**<br>**B դաս՝ 176.1640** |
| **Փայի մեկ միավորի կատարողականը սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից, տոկոսային արտահայտությամբ, %** | **A դաս՝ 18.20%**<br>**B դաս՝ 17.62%** |

## 4. ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԿԱԶՄԸ 2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

| ISIN | Անվանումը* | Արժույթը | Քանակ | Ձեռք բերված քանակ | Վաճառված քանակ | Շուկայական արժեքը արժույթով (կլորացված) | Շուկայական արժեք ՀՀ դրամով | % զուտ ակտիվների նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | | | | | | | | |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMGB1029A250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25 | ՀՀ դրամ | 135,000,000 | - | - | 105.70 | 142,689,021.26 | 1.42% |
| AMGB1029A276 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/27 | ՀՀ դրամ | 250,000,000 | 50,000,000 | - | 102.11 | 255,280,346.25 | 2.54% |
| AMGB1029A292 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29 | ՀՀ դրամ | 587,000,000 | - | - | 96.33 | 565,481,068.38 | 5.62% |
| AMGB1129A316 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/31 | ՀՀ դրամ | 374,400,000 | 374,400,000 | - | 88.91 | 332,864,169.21 | 3.31% |
| AMGB20172327 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 12/32 | ՀՀ դրամ | 320,000,000 | 125,000,000 | - | 123.42 | 394,937,051.52 | 3.92% |
| AMGB2029A366 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/36 | ՀՀ դրամ | 280,000,000 | 30,000,000 | - | 124.70 | 349,152,050.52 | 3.47% |
| AMGB2029A374 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/37 | ՀՀ դրամ | 292,000,000 | 263,000,000 | - | 121.30 | 354,199,219.59 | 3.52% |
| AMGB30163472 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/47 | ՀՀ դրամ | 257,000,000 | 257,000,000 | - | 130.26 | 334,779,398.26 | 3.32% |
| AMGB3129A504 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/50 | ՀՀ դրամ | 120,000,000 | 60,000,000 | - | 98.44 | 118,130,883.60 | 1.17% |
| AMGN36294244 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/24 | ՀՀ դրամ | 70,000,000 | 70,000,000 | - | 94.89 | 66,424,030.54 | 0.66% |
| AMGN60294250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/25 | ՀՀ դրամ | 100,000,000 | - | - | 93.64 | 93,640,485.80 | 0.93% |
| AMGN60294268 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/26 | ՀՀ դրամ | 390,000,000 | 390,000,000 | - | 91.43 | 356,559,274.89 | 3.54% |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMAMRBB2NER9 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 20/22 | ՀՀ դրամ | 1,000 | - | - | 102,245.00 | 102,245,000.00 | 1.01% |
| AMAMRBB2UER4 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 21/23 | ՀՀ դրամ | 512 | 512 | - | 101,631.67 | 52,035,415.04 | 0.52% |
| AMAMRBBM2ER1 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 21/23 | ՀՀ դրամ | 500 | 500 | - | 101,566.69 | 50,783,345.75 | 0.50% |
| AMASHBB2AER2 | Արդշինբանկ 20/22 | ԱՄՆ Դոլար | 2,520 | - | - | 102.40 | 123,899,892.69 | 1.23% |
| AMASHBB2DER6 | Արդշինբանկ 20/23 | ՀՀ դրամ | 25,200 | - | - | 10,102.39 | 254,580,113.34 | 2.53% |
| AMASHBB2HER7 | Արդշինբանկ 21/23 | ՀՀ դրամ | 1,270 | 1,270 | - | 102,180.26 | 129,768,923.85 | 1.29% |
| AMCOVSB2CER3 | Կոնվերսբանկ ՓԲԸ պարտատոմս 21/24 | ՀՀ դրամ | 1,400 | 1,400 | - | 50,641.07 | 70,897,499.40 | 0.70% |
| AMFNCAB26ER3 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 19/22 | ՀՀ դրամ | 5,000 | - | - | 10,276.75 | 51,383,759.25 | 0.51% |
| AMHEZBB28ER3 | Հայէկոնոմբանկ 20/23 | ՀՀ դրամ | 5,000 | - | - | 10,266.28 | 51,331,395.25 | 0.51% |
| AMNMCCB2LER4 | Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 21/24 | ՀՀ դրամ | 3,400 | 3,400 | - | 10,270.31 | 34,919,037.17 | 0.35% |
| AMZPXKB21ER2 | Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ 19/22 | ԱՄՆ Դոլար | 1,000 | - | - | 101.15 | 48,564,912.64 | 0.48% |
| AMZPXKB22ER0 | Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ 19/22 | ՀՀ դրամ | 750 | - | - | 102,546.97 | 76,910,223.75 | 0.76% |
| **Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության պարտատոմսեր** | | | | | | | **4,411,456,517.95** | **43.81%** |

## «Յե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդ

**Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն (շարունակ. )**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Օտարերկրա ներդրումներ** | | | | | | | | |
| **Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | | |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| IE00B7J7TB45 | IS GBL CORP BD U.ETF DLD | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 4,900 | 4,900 | - | 103.57 | 243,655,925.59 | 2.42% |
| IE00BKKKWJ26 | ISH2-DL C.BD U. DL ACC. | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 148,000 | 148,000 | - | 5.23 | 371,597,823.10 | 3.69% |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| AT0000A12G92 | C-QUADR.GR.ST.ESG(VTA) | ԵՎՐՈ | 40,000 | 18,000 | - | 19.59 | 425,189,196.00 | 4.22% |
| IE00B0M62Q58 | ISHS-MSCI WORLD DL D | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 5,960 | 5,960 | - | 68.65 | 196,436,893.39 | 1.95% |
| IE00B52VJ196 | ISHSII-MSCI EUR.SRI EOACC | ԵՎՐՈ | 1,150 | 1,150 | - | 65.14 | 40,647,457.71 | 0.40% |
| IE00B5BMR087 | ISHSVII-CORE S+P500 DLACC | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,295 | 470 | 290 | 487.33 | 303,012,680.93 | 3.01% |
| IE00BJ0KDQ92 | X(IE)-MSCI WORLD 1C | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 3,700 | 820 | - | 97.79 | 173,725,695.22 | 1.73% |
| IE00BJ0KDQ92 | X(IE)-MSCI WORLD 1C | ԵՎՐՈ | 1,700 | 820 | - | 86.71 | 79,980,822.52 | 0.79% |
| IE00BYVJRR92 | ISIV-MSCIUSASRI U.ETF DLA | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 111,250 | 111,250 | - | 14.06 | 750,755,906.63 | 7.46% |
| LU0274211217 | XTR.EURO STOXX 50 1D | ԵՎՐՈ | 8,400 | 8,400 | - | 45.71 | 208,319,916.42 | 2.07% |
| LU0360482987 | MSI-GLOBAL BRANDS Z DL | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,530 | 1,530 | 5,100 | 108.73 | 79,874,601.97 | 0.79% |
| LU0839027447 | XTR.NIKKEI 225 1D | ԵՎՐՈ | 7,150 | 5,600 | 3,250 | 23.05 | 89,426,197.58 | 0.89% |
| LU1223082279 | SCHROD.ISF-GL.GOLD CACCDL | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,090 | 530 | 950 | 123.83 | 64,808,688.86 | 0.64% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **3,027,431,805.92** | **30.06%** |
| **Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | | |
| **Ներդրումներ բաժնային գործիքներում** | | | | | | | | |
| LU00AMBCAP11 | Amber Capital Private Equity Fund | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 18,086 | 530 | - | 1.00 | 8,683,898.47 | 0.09% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **8,683,898.47** | **0.09%** |
| **Ընդամենը գործառնություններ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **3,036,115,704.39** | **30.15%** |
| **Դրամական միջոցներ** | | **ՀՀ ԴՐԱՄ** | | | | | **34,454,055.65** | **0.34%** |
| **Ավանդներ ՀՀ բանկերում** | | **ՀՀ ԴՐԱՄ** | | | | | **2,551,000,000.00** | **25.34%** |

## «Յե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդ

**Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն (շարունակ. )**

| | | | |
|---|---|---|---|
| **Հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | |
| Տոկոսի հաշվեգրումներ | ՀՀ ԴՐԱՄ | 50,998,377.98 | 0.51% |
| Վճարների հաշվեգրումներ | ՀՀ ԴՐԱՄ | (15,012,344.72) | (0.15%) |
| **Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ** | | **35,986,033.26** | **0.36%** |
| | | | |
| **Ընդամենը զուտ ակտիվների արժեքը** | | **10,069,012,311.25** | **100%** |
| **Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով, ՀՀ դրամ** | | A դաս: 1,181.9747<br>B դաս: 1,176.1640 | |
| **Ընդամենը զուտ ակտիվների արժեքը** | | A դաս: 7,929,917<br>B դաս: 591,797 | |

*Արժեթղթի անվանումից հետո առաջին թիվը թողարկման տարին է, իսկ երկրորդ թիվը՝ մարման տարին:

**ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԿԱԶՄԸ 2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

| ISIN | Անվանումը* | Արժույթը | Քանակ | Ձեռք բերված քանակ | Վաճառված քանակ | Շուկայական արժեքը արժույթով (կլորացված) | Շուկայական արժեք ՀՀ դրամով | % զուտ ակտիվների նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | | | | | | | | |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMGB1029A250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25 | ՀՀ ԴՐԱՄ | 135,000,000 | 135,000,000 | - | 112.39 | 151,728,482.88 | 2.93% |
| AMGB1029A276 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/27 | ՀՀ ԴՐԱՄ | 200,000,000 | 100,000,000 | - | 108.78 | 217,566,402.80 | 4.20% |
| AMGB1029A292 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29 | ՀՀ ԴՐԱՄ | 587,000,000 | 387,000,000 | - | 102.99 | 604,579,171.35 | 11.68% |
| AMGB20172327 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 12/32 | ՀՀ ԴՐԱՄ | 195,000,000 | 195,000,000 | - | 133.60 | 260,518,087.64 | 5.03% |
| AMGB2029A366 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/36 | ՀՀ ԴՐԱՄ | 250,000,000 | 250,000,000 | - | 135.74 | 339,359,057.75 | 6.55% |
| AMGB2029A374 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/37 | ՀՀ ԴՐԱՄ | 29,000,000 | 29,000,000 | - | 132.16 | 38,325,830.27 | 0.74% |
| AMGB3129A504 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/50 | ՀՀ ԴՐԱՄ | 60,000,000 | 60,000,000 | - | 107.84 | 64,705,153.74 | 1.25% |
| AMGN60294250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/25 | ՀՀ ԴՐԱՄ | 100,000,000 | 100,000,000 | - | 96.90 | 96,896,345.00 | 1.87% |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMAMRBB2NER9 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ 20/22 | ՀՀ ԴՐԱՄ | 1,000 | 1,000 | - | 101,729.50 | 101,729,500.00 | 1.97% |
| AMASHBB2AER2 | Արդշինբանկ ՓԲԸ 20/22 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2,520 | 2,520 | - | 100.54 | 132,403,820.47 | 2.56% |
| AMASHBB2DER6 | Արդշինբանկ 20/23 | ՀՀ ԴՐԱՄ | 25,200 | 25,200 | - | 10,091.36 | 254,302,319.88 | 4.91% |
| AMFNCAB26ER3 | ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ 19/22 | ՀՀ ԴՐԱՄ | 5,000 | - | - | 10,548.60 | 52,742,997.75 | 1.02% |
| AMHEZBB28ER3 | Հայէկոնոմբանկ 20/23 | ՀՀ ԴՐԱՄ | 5,000 | 5,000 | - | 10,320.51 | 51,602,550.00 | 1.00% |
| AMZPXKB21ER2 | Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ 19/22 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,000 | - | - | 97.87 | 51,145,883.30 | 0.99% |
| AMZPXKB22ER0 | Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ 19/22 | ՀՀ ԴՐԱՄ | 750 | - | - | 103,219.71 | 77,414,778.75 | 1.50% |
| **Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության պարտատոմսեր** | | | | | | | **2,495,020,381.58** | **48.20%** |

**Օտարերկրյա ներդրումներ**
**Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| IE00BSKRJZ44 | ISHSIV-DL T.BD20+YR DL D | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 54,100 | 72,000 | (17,900) | 5.87 | 165,957,338.53 | 3.21% |
| LU0776122383 | BGF-ASIAN TIG.BD D2 USD | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 10,000 | 10,000 | - | 15.62 | 81,628,558.00 | 1.58% |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| AT0000A12G92 | C-QUADR.GR.ST.ESG(VTA) | ԵՎՐՈ | 22,000 | 22,000 | - | 16.34 | 230,466,222.80 | 4.45% |
| IE00B1FZS798 | ISHSII-DLT.BD7-10YR DLDIS | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,000 | 1,000 | - | 218.95 | 114,421,080.50 | 2.21% |
| IE00B5BMR087 | ISHSVII-CORE S+P500 DLACC | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,115 | 1,115 | - | 377.50 | 219,964,663.37 | 4.25% |
| IE00BJ0KDQ92 | X(IE)-MSCI WORLD 1C | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 3,700 | 3,700 | - | 80.05 | 154,773,651.23 | 2.99% |
| IE00BJ0KDQ92 | X(IE)-MSCI WORLD 1C | ԵՎՐՈ | 880 | 880 | - | 65.32 | 36,853,156.93 | 0.71% |
| IE00BZ036H21 | X(IE)-USD CORP.BD 1DDL | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 12,350 | 12,350 | - | 17.15 | 110,702,003.44 | 2.14% |
| LU0360482987 | MSI-GLOBAL BRANDS Z DL | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 5,100 | 5,100 | - | 88.87 | 236,857,123.83 | 4.57% |
| LU0839027447 | XTR.NIKKEI 225 1D | ԵՎՐՈ | 4,800 | 4,800 | - | 22.57 | 69,455,292.96 | 1.34% |
| LU1223082279 | SCHROD.ISF-GL.GOLD CACCDL | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,510 | 1,510 | - | 150.74 | 118,953,496.77 | 2.30% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **1,540,032,588.36** | **29.75%** |
| **Դրամական միջոցներ** | | **ՀՀ ԴՐԱՄ** | | | | | **3,299,253.24** | **0.06%** |
| **Ավանդներ ՀՀ բանկերում** | | **ՀՀ ԴՐԱՄ** | | | | | **1,043,700,000.00** | **20.16%** |
| **Հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | | | | | | |
| Տոկոսի հաշվեգրումներ | | ՀՀ ԴՐԱՄ | | | | | 101,185,833.44 | 1.95% |
| Վճարների հաշվեգրումներ | | ՀՀ ԴՐԱՄ | | | | | (6,670,123.43) | (0.13%) |
| **Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | | | | | **94,515,710.01** | **1.83%** |
| **Ընդամենը զուտ ակտիվների արժեքը** | | | | | | | **5,176,567,933.19** | **100%** |
| **Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով, ՀՀ դրամ** | | | | | | **ՀՀ ԴՐԱՄ** | Դաս A՝ 1,158.7577<br>Դաս B՝ 1,155.2612 | |
| **Ընդամենը զուտ ակտիվների արժեքը** | | | | | | **Փայ** | Դաս A՝ 4,398,429<br>Դաս B՝ 69,122 | |

*Արժեթղթի անվանումից հետո առաջին թիվը թողարկման տարին է, իսկ երկրորդ թիվը՝ մարման տարին: